ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գ. Տարոնիկ 14.07.2011թ.

Հարգելի տիկին Մուրադյան, համայնքի ղեկավարի աշխատակազմ, ավագանու անդամներ, համագյուղացիներ.

2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տարոնիկ համայնքում իրականացվել են աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը:

- կատարվել է համայնքի բնակիչների ընդունելություն
- տրամադրվել է 420 տարբեր բնույթի տեղեկանքներ, անհրաժեշտ փաստաթղթեր
- բնակիչների կողմից ստացվել է թվով 7 դիմում, որոնք ուսումնասիրվել են և տրվել [illegible] լուծում
- ստացվել է 82 գրություն ,որոնք քննարկվել են և պատասխանվել ըստ կարգի
- կայացվել է թվով 3 ավագանու նիստեր, համայնքի ղեկավարի 8 որոշում, արձակվել է 5 կարգադրություն, որոնց հիմնական խնդիրը ուղղված է եղել համայնքի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական զարգացմանը
- անհրաժեշտության դեպքում կատարվել է համայնքի բնակիչների շահերի պաշտպանությունը տնտեսվարող այլ սյուբեկտների հետ փոխհարաբերություններում
- կազմակերպվել է աշխատանքներ հողի հարկի և գույքահարկի հավաքագրումն իրականացնելու և բյուջե մուտքեր ապահովվելու գործում

Ֆինանսական բաժին

- հողի հարկը նախատեսված է եղել 9.127.8, որից հավաքագրվել է 630.6, քանի որ բերքահավաքը լինում է աշնանը հիմնական հավաքահրումը նախատեսվում է աշնանը
- գույքահարկը նախատեսված է եղել 2.097.2, որից հավաքագրվել է 636.6
- հողի վարձավճարը նախատեսված է եղել 300.0, որից հավաքագրվել է 12.1
- համայնքի բյուջեի կատարողականը կազմում է 87 %
- համայնքի ավագանու որոշմամբ ազգաբնակչության անապահով խավի ընտանիքներին տրամադրվել է 260.0 հզ. դրամի սոց. օգնություն
- ավագանու որոշմամբ զիջվել է առավել անապահով ընտանիքների տրանսպորտային միջոցների. գույքահարկի գումարները
- համայնքի փողոցներից յուրաքանչյուր ամիս կատարվել է աղբահանություն, ընդհանուր առմամբ 1.100.0 հզ. դրամի
- գյուղապետարանի և նրա ենթակայության տակ գտնվող օբյեկտներին վճարվել է աշխատավարձ՝ 5245.4 հզ. դրամ
- փոխանցվել է սոց. վճար՝1388.0 հզ. դրամ
- համայնքը աշխատավարձի և սոցվճարի գծով պարտքեր չունի
- սպորտ և երիտասարդական ծրագրերի գծով միջոցառումների կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 540.0 դրամ
- ապրանքների ձեռք բերման և ծառայությունների մատուցման համար ծախսվել է 5176.1 դրամ
- կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ գյուղապետարանի և մանկապարտեզի շենքերի համար 1600.0 հզ.
- տարվել են աշխատանքներ համապատասխան զինկոմիսարիատների հետ զորակոչային տարիքի պատանիների կցագրման, զորակոչի կազմակերպման, զինապարտների գրանցամատյանների վարման և այլ հարցերում
- արցախյան պատերազմի զոհված ազատամարտիկների ընտանիքների հողի հարկերը յուրաքանչյուր տարի օգնության տեսքով վճարում է գյուղապետարանը

- մշտապես իրականացվում են աշխատանքներ համայնքի կապի, գազի, լուսավորության, ոռոգման ջրի և այլ կառուցվածքների աշխատանքների և բնակիչների խնդիրների լուծման հարցում
- ներկայումս կատարվում են աշխատանքներ համայնքի խմելու ջրի ջրամբարի կառուցման աշխատանքները ավարտին հասցնելու համար
- Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ ծրագրի շրջանակներում համայնքում իրականացվում է ոռոգման ցանցի կապիտալ շինարարություն
- վերահսկողություն է իրականացվում համայնքի հուշարձանների և գերեզմանների [illegible] նպատակով
- [illegible]ացվում են աշխատանքներ համայնքի հողային հաշվեկշռի, հաշվետվությունների կազմման և ժամանակին համապատասխան սյուբեկտներին տրամադրման գործում
- կազմակերպվում է աշխատանքներ համայնքի տրանսպորտային կապի ուղղությամբ, վերահսկողություն է իրականացվում հանրային սննդի վաճառքի ոլորտում սանիտարահիգիենիկ վիճակին
- կազմակերպվում են միջոցառումներ տոնական և հիշատակի օրերի կազմակերպման և անցկացման նպատակով
- գյուղապետարանը մասնակցություն է ցուցաբերում հատկապես հանրակրթական դպրոցին,մասնակցում է դպրոցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին
- գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 17 անձից, որոնցից յոթը համայնքային ծառայողներ են, մեկը համայնքի ղեկավարի տեղակալ, պայմանագրային և տեխնիկական աշխատողներ
- համայնքում սեզոնային կարգով գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են 35 երեխա
- համայնքի գրադարանը ունի 3429 կտոր գրականություն, որից օգտվում է 850 ընթերցող
- մշտական ուշադրություն է դարձվում համայնքի տարածքում գտնվող Մեծամոր պատմահնագիտական թանգարանի գործունեությանը, ուր այցելում են բազմաթիվ տուրիստական խմբեր, կազմակերպվում է տարբեր բնույթի միջոցառումներ
- վերահսկողություն է իրականացվում համայնքում անասնաբուժական միջոցառումների կազմակերպման, կենդանիներին հիվանդություններից պաշտպանելու և կանխարգելելու նպատակով
- ուշադրություն է դարձվում բնապահպանական խնդիրներին՝ տնկվում է ծառեր, մշակվում է կանաչապատ տարածքները:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **/Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ /**

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Համայնքի խմելու ջրի խնդիրը
2. Կուլտուրայի պալատի հիմնանորոգում
3. Դպրոցի շենքի կապիտալ վերանորոգում
4. Մանկապարտեզի շենքի վերանորոգում

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՍԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

14.07.2011թ. գ. Տարոնիկ

Մասնակցում էին՝

Արմավիրի մարզպետարանի առողջապահության գծով մարզպետի տեղակալ Լ. Մուրադյանը
Համայնքի ղեկավարի աշխատակազմը, բուժամբուլատորիայի աշխատակազմը, մանկապարտեզի և ուսուցչական կոլեկտիվի ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, փոստային բաժանմունքի աշխատակիցը

Տարոնիկ համայնքի 28 անդամներ

Օ ր ա կ ա ր գ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ալվետիսյանը
ներկայացրեց 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքները, մասնավորապես հողի հարկի և գույքահարկի հավաքագրումները, գյուղատնտեսության ոլորտում կատարված աշխատանքները և այլն:

Մասնակիցները նշեցին.
Քանի որ բերքահավաքը հիմնականում լինում է աշնանը և բնակիչները հողի հարկերը վճարում են այդ ժամանակ խնդրեցին հաշվի առնել այդ հանգամանքը: Քննարկվեց վարկերի բարձր տոկոսադրույքները: Նշվեց նաև, որ համայնքի ղեկավարը իր անմիջական մասնակցությունն է ունենում յուրաքանչյուր ընտանիքի առջև ծառացած խնդիրների լուծման գործում:

Բարձրացված հարցերին պատասխանեց տիկին Լ. Մուրադյանը և Լ. Ալվետիսյանը:

Մասնակիցների կողմից հավանության արժանացավ համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությունը:

Իսկականի հետ ճիշտ է:

Տարոնիկ համայնքի ղեկավար / Ա. Խաչատրյան /

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

14.07.2011թ. գ. Տարոնիկ

Մասնակցում էին՝

Արմավիրի մարզպետարանի առողջապահության գծով մարզպետի տեղակալ Լ. Մուրադյանը
Համայնքի ղեկավարի աշխատակազմը, բուժամբուլատորիայի աշխատակազմը, մանկապարտեզի և ուսուցչական կոլեկտիվի ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, փոստային բաժանմունքի աշխատակիցը

Տարոնիկ համայնքի 28 անդամներ

Օ ր ա կ ա ր գ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լ. Ավետիսյանը

Ներկայացրեց 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքները, մասնավորապես հողի հարկի և գույքահարկի հավաքագրումները, գյուղատնտեսության ոլորտում կատարված աշխատանքները և այլն:

Մասնակիցները նշեցին.

Քանի որ բերքահավաքը հիմնականում լինում է աշնանը և բնակիչները հողի հարկերը վճարում են այդ ժամանակ խնդրեցին հաշվի առնել այդ հանգամանքը: Քննարկվեց վարկերի բարձր տոկոսադրույքները: Նշվեց նաև, որ համայնքի ղեկավարը իր անմիջական մասնակցությունն է ունենում յուրաքանչյուր ընտանիքի առջև ծառացած խնդիրների լուծման գործում:

Բարձրացված հարցերին պատասխանեց տիկին Լ. Մուրադյանը և Լ. Ավետիսյանը:

Մասնակիցների կողմից հավանության արժանացավ համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությունը:

Իսկականի հետ ճիշտ է:

Տարոնիկ համայնքի ղեկավար / Ա. Խաչատրյան /